



ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ 2

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

«Ալֆա» փակ բաժնետիրական ընկերությունն (այսուհետ նաև՝ «Ընկերություն») առևտրային իրավաբանական անձ է, որը զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ՝ արտադրում է տարբեր սարքավորումների մարտկոցներ:

Այն հիմնադրվել է 15.02.2016 թ.-ին, գրանցման համար՝ 211.110.000000: Ընկերության բոլոր բաժնետոմսերի սեփականատեր և հիմնադիր է հանդիսանում Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի Գրիգոր Գրիգորյանը, ով Հայաստանի Հանրապետությունում ունի կացության հատուկ կարգավիճակ:

Ընկերությունը հիմնադրելիս, որպես կանոնադրական կապիտալում ներդրում, Գրիգոր Գրիգորյանը ներդրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող արտադրամասի շենքը և համապատասխան սարքավորումները, որոնք անկախ գնահատողը գնահատել է 100 000 000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամ:

Հիմնադրի որոշմամբ Ընկերության տնօրեն է նշանակվել Արմեն Արմենյանը, ում հետ 15.02.2016 թ.-ին կնքվել է անժամկետ աշխատանքային պայմանագիր:

2017 թ.-ի փետրվարի վերջին Արմեն Արմենյանը հայտարարություն է տեսնում, որով «Բետա» ՍՊԸ-ն ազդարարում է, որ պատրաստվում է 200 000 (երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով և 8 (ութե) տոկոս եկամտաբերությամբ պարտատոմսեր թողարկել:

Այդ պահին Ընկերության գործարարական գործունեությունը բավականին լավ էր ընթանում՝ վերջինս ուներ ազատ միջոցներ:

Հասկանալով, որ սա բավականին բարձր տոկոս է, Արմենը զանգահարում է «Բետա» ՍՊԸ տնօրեն Պողոս Պողոսյանին և առաջարկում փոխառությամբ տալ 200 000 (երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլար միանգամից՝ առանց պարտատոմսեր թողարկելու, սակայն 9 (ինը) տոկոս եկամտաբերությամբ: Պողոսը համաձայնում է՝ միայն խնդրելով իրեն տրամադրել Ընկերության կանոնադրությունը, ռեզիստրից քաղվածքը, ինչպես նաև 2016 թ.-ի վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Արմենը փոխանցում է նշված փաստաթղթերը:

27.03.2017 թ.-ին կնքվում է 200 000 (երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլարի փոխառության վերաբերյալ պայմանագիրը, և նույն օրն այդ գումարը փոխանցվում է «Բետա» ՍՊԸ հաշվեհամարին:

2018 թ.-ի սկզբին Արմենի և Ընկերության հիմնադիր Գրիգորի հարաբերությունները վատթարանում են և սրվում: 02.04.2018 թ.-ին Գրիգորը որոշում է կայացնում՝ հեռացնելով Արմենին աշխատանքից և լուծելով վերջինիս հետ կնքված աշխատանքային պայմանագիրը: Նույն օրը տնօրեն է նշանակվում Բաբկեն Բաբկենյանը:

Բաբկենն անմիջապես պատվիրում է Ընկերության գործունեության աուդիտ, որի արդյունքները ստանում է 09.04.2018 թ.-ին, և դրա հիման վրա 30.04.2018 թ.-ին հրավիրվում է Ընդհանուր ժողովի հերթական նիստ:

Տեղեկանալով փոխառության պայմանագրի մասին՝ Գրիգորը որոշում է պահանջել այն անվավեր ճանաչել և կարգադրում է Բաբկենին դատարան հայց ներկայացնել:

Ընկերությունը 10.05.2018 թ.-ին հայց է ներկայացնում ընդդեմ Արմենի և «Բետա» ՍՊԸ-ի՝ խնդրելով անվավեր ճանաչել 27.03.2017 թ.-ի փոխառության պայմանագիրն այն հիմքով, որ այն կնքվել է առանց



Գրիգորի համաձայնությամբ, ինչպես նաև արտարժույթով, ինչը խախտում է արժույթային կարգավորման կանոնները: Հայցադիմումը վարույթ է ընդունվում 14.05.2018 թ.-ին:

«Բետա» ՍՊԸ-ն առարկում է հայցի դեմ, նշելով, որ՝

- 1) 27.03.2017 թ.-ի փոխառության պայմանագիրը չի հանդիսանում խոշոր գործարք, հետևաբար չկար Ընդհանուր ժողովի հավանությունը ստանալու անհրաժեշտություն,
- 2) Ընկերության կանոնադրության 5.14 կետը չի կարող կիրառվել, քանի որ այն անվավեր է՝ հակասելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածին,
- 3) եթե նույնիսկ գործարքը խոշոր գործարք է, հիմնադիրը կարող է խոշոր գործարքի վերաբերյալ որոշում կայացնել, միայն եթե դրա արժեքը Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավել է: Քանի որ Ընկերությունում տնօրենների խորհուրդ չի ձևավորվել, գործադիր տնօրենը կարող է առանց հավանության կնքել մինչև ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսը կազմող գործարքներ,
- 4) գործարքը կապված չէ Ընկերության գույքի օտարման հետ:

Բացի դրանից, «Բետա» ՍՊԸ-ն ներկայացնում է հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն:

Արմենը 28.05.2018 թ.-ին հակընդդեմ հայց է ներկայացնում ընդդեմ Ընկերության՝ խնդրելով վերականգնել իրեն նախկին աշխատանքում, քանի որ իրեն աշխատանքից ազատել են առանց պատճառի, ինչպես նաև վճարել հարկադիր պարապուրդի համար միջին աշխատավարձ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

1. «Ալֆա» ՓԲԸ կանոնադրության կետ 5.14-ը սահմանում է՝ «Գործարքները, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են Ընկերության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 10 և ավելի տոկոսը, կարող են կնքվել միայն Տնօրենների խորհրդի կողմից հավանության արժանանալու դեպքում»:

2. «Ալֆա» ՓԲԸ կանոնադրության կետ 5.15-ը սահմանում է՝ «Գործարքները, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են Ընկերության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը, կարող են կնքվել միայն Ընդհանուր ժողովի կողմից հավանության արժանանալու դեպքում»:

3. «Ալֆա» ՓԲԸ կանոնադրությամբ նախատեսված է, որ Ընկերությունում առկա է Տնօրենների խորհուրդ, սակայն վերջինս չի ձևավորվել:

4. 27.03.2017 թ.-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած հաշվարկային փոխարժեքը մեկ դոլարի նկատմամբ կազմում էր 484 (չորս հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ:

5. «Ալֆա» ՓԲԸ ակտիվների հաշվեկշռային արժեքը 27.03.2017 թ.-ի դրությամբ հասել էր 500 000 000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամի, որն Ընկերության գոյության ժամանակաշրջանում ամենաբարձր ցուցանիշն էր:

6. Արմենի աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ որոշման մեջ նշված չի եղել դրա որևէ հիմնավորում:



ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Հարցադրում 1.

Ներկայացրե՛ք, արդյոք 27.03.2017 թ.-ի փոխառության պայմանագիրը կնքելիս պահպանվել է դրա կնքման ընթացակարգը՝ գնահատելով նաև «Բեյրա» ՍՊԸ առարկությունները: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 2.

Արդյոք անվավեր է 27.03.2017 թ.-ի փոխառության պայմանագիրը: Վերլուծե՛ք անվավերության հիմքերը, եթե այդպիսիք կան: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 3.

Արդյոք Ընկերությունն իրավունք ունի ներկայացնելու 27.03.2017 թ.-ի փոխառության պայմանագրի անվավերության պահանջ: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 4.

Արդյոք անցել են Ընկերության հայց ներկայացնելու հայցային վաղեմության ժամկետները: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 5.

Արդյոք հիմնավոր է Ընկերությանն ուղղված Արմենի պահանջը: Հիմնավորե՛ք պատասխանը: